Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
21	Օգոստոս	2019 թ.	Բ	9009978247
[4] Առաքման ամսաթիվ			Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
21	Օգոստոս	2019 թ.	Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձ

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1	
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձ

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը		
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր: Համար	
	Լիազորագիր: Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը		
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 38157919բ/զ.	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

21/08/2019 14:12:11

Ո ր ո շ ու մ

/ Անբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին/

,, 10 ,, հուլիսի 2019թ. ք. Իջևան

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ե.Ո.Գալստյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 38157919 քրեական գործի նյութերը.

պ ա ր զ ե ց ի

2019 թվականի մայիսի 17-ին ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 38157919 քրեական գործն այն դեպքի առթիվ, որ 2019թվականի մայիսի 16-ին ժամը 04:30-ի սահմաններում Իջևան քաղաքի բնակիչ Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը, ուրիշի գույքը գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, բաց պատուհանով ապօրինի մուտք է գործել Իջևան քաղաքի Երևանյան 110 հասցեում գտնվող ,,Բազե,, սուպերմարկետ և այնտեղից գաղտնի հափշտակել 3000 ՀՀ դրամ, 3 տուփ ,,Պառլամենտ,, տեսակի ծխախոտ, որից հետո, ուրիշի գույքը դիտավորյալ ոչնչացնելու նպատակով, համակարգչի պրոցեսորները նետել է գետը պատճառելով շուրջ 355.700 ՀՀ դրամի գույքային վնաս:

Քրեական գործը ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն, որտեղ ստացվել է 17.05.2019թ. և նույն օրը ձեռնարկվել է նախաքննություն:

Արսեն Շահոյի Հարությունյանը որպես տուժող ցուցմունք է տվել այն մասին, որ Իջևան քաղաքում ունի ,,Բազե,, սուպերմարկետների ցանց Երևանյան 110 և Աբովյան 55 հասցեներում : Սուպերմարկետներն աշխատում են ամեն օր առավոտյան ժամը 09:00-ից մինչև 00:00-ն: Խանութն առավոտյան սովորաբար բացում են աշխատողները, իսկ գիշերները փակում է ինքը, իր բացակայության ժամանակ փակում են աշխատողները: 2019 թվականի մայիսի 10-ին գնացել է Ուկրաինա, որտեղ գտնվելու ժամանակ 2019 թվականի մայիսի 16-ին, իրեն զանգահարել է Երևանյան 110 հասցեում գտնվող սուպերմարկետի աշխատակցուհին Անիկ Մելիքսեթյանը, և հայտնել որ գիշերը խանութի երկրորդ հարկի, գետի կողմից բաց լուսամուտով ինչ-որ մեկը մտել է խանութ և գողացել խանութի ապրանքները մուտք անող համակարգիչների երկու պրոցեսորները, կտրել դրանց և տեսախցիկների լարերը, շրջել դրամարկղը. Ինքը զանգահարել է ոստիկանություն և հայտնել կատարվածի մասին: Մայիսի 17-ին վերադառնալով Հայաստան խանութն ուսումնասիրելուց հետո պարզել է որ ստենդից ցուցանակից, գողացվել է 3 տուփ պառլամենտ տեսակի ծխախոտ յուրաքանչյուրի վաճառքի գինը 900 ՀՀ դրամ, և համակարգիչների երկու պրոցեսորներ, ավելին խանութից ոչինչ չեն գողացել, նշվածի արդյունքում իրեն պատճառվել է 350.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը որպես կասկածյալ ցուցմունք է տվել այն մասին, որ շուրջ 8 ամիս առաջ ամուսնացել է Իջևան քաղաքի բնակչուհի Սուսաննա Աղաջանյանի հետ: Մոտ 4 ամիս առաջ Սուսաննան իրեն չհասկանալու պատճառով թողել և գնացել է հայրական տուն: Քանի որ նա սպասում է իր երեխային չի ցանկանում նրանից ... հավանում է կրկին միանալ: 2019 թվականի

մայիսի 15-ին բանվորություն անելով 10.000 ՀՀ դրամ վաստակելուց հետո որոշել է գնումներ կատարել և գնալ Սուսաննային տեսակցության: Ժամը 22:00-ի սահմաններում մոտ 6.000 ՀՀ դրամի գնումներ կատարելուց հետո միայնակ գնացել է Սուսաննայի հայրական տուն: Քանի որ ոչ Սուսաննան, ոչ էլ նրա մայրը չեն բացել տան դուռը, ինքն լուսամուտը բացել է և գնած ուտելիքը լուսամուտով դրել տանը: Սուսաննայի կողմից իրեն չընդունելու պատճառով սրտնեղած գնացել է Իջևան քաղաքի կենտրոնական հատված, Իջևան քաղաքի քաղաքապետարանի մոտ գտնվող սննդի կետից Վառոյի մոտից, գնել գարեջուր, խմել և լինելով ալկոհոլի ազդեցության տակ որոշել է ինչ որ տեղից գողություն կատարել : Շուկայի հարակից փողոցում շրջելով, Բազե խանութից մոտ 10 մետր հեռավորության վրա գտնվող խանութի մոտով անցել է գետի կողմ, բարձրացել տանիք ու այդպես առաջացել դեպի Բազե խանութ: Տեսնելով, որ Բազե խանութի երկրորդ հարկի գետի կողմից լուսամուտը բաց է, որոշել է մտնել խանութ և այնտեղից ինչ-որ բան գողանալ: Տանիքից կախվել է և լուսամուտով մտել խանութ: Խանութ մտնելուն պես ձայնային ազդանշանը միացել է, մտածել է, որ այն միանում է համակարգիչներով, որից հետո վերցրել է երկրորդ հարկի պահեստում գտնվող երկու հատ համակարգչի պրոցեսորները և լուսամուտով գցել Աղստևը գետը, բայց տեսնելով, որ ձայնային ազդանշանը չի անջատվում, սկսել է պոկել այնտեղով անցնող լարերը, բայց ձայնային ազդանշանն այդպես էլ չի անջատվել: Դրանից հետո ծախախոտների ցուցանակի վրայից վերցրել է երեք հատ Պառլամենտ տեսակի ծխախոտ և նույն լուսամուտով դուրս եկել խանութից: Ծխախոտներից բացի այլ իր խանութից չի գողացել:

2019 թվականի մայիսի 24-ին Նիկոլայ Ցուցուլովին մեղադրանք է առա ադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

2019 թվականի հունիսի 14-ին Տավուշի մարզի զինկոմիսարիատից ստացվել է թիվ 4/1384 գրությունը համաձայն, որի Նիկոլայ Ցուցուլովի մոտ ախտորոշվել է մտավոր հետամնացություն, վարքի խանգարումով:

Նկատի ունենալով, որ Նիկոլայ Ցուցուլովի հոգեկան լիարժեքությունը, և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-246-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով,

որոշեցի

Թիվ 38157919 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «ՀՀ ԱՆ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի փորձագետներին.

Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1. Հետազոտվող Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա երբվանից և ինչ հոգեկան հիվանդությամբ:
2. Առկա հոգեկան վիճակից ելնելով հանցագործության կատարման պահին կամ դրանից հետո այդ թվում ցուցմունք տալու պահին Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովն ի վիճակի՞ է ճիշտ ընկալել և վերարտադրել իր և իր շրջապատի անձանց գործողությունները, քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

3. Առկա հոգեկան վիճակով **Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը** կարող է մասնակցել քննչական գործողությունների և դատական նիստերին:
4. **Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը** մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
5. **Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը** հարկադիր բուժման կարիք ունի, թե՞ ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:
6. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն փորձաքննության լրիվության համար, ապա խնդրվում է պատասխանել նաև այդ հարցերին:

Ընկերության տնօրենին

Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածում նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու և առանց քննիչ թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Նիկոլայ Ռուբենի Ցուցուլովը և թիվ 38157919 քրեական գործը փորձագետին կներկայացվեն փարձաքննության անցկացման օրը:

ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային
քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ե.Ռ.Գալստյան